



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 01/20**

16.01.2020թ.

ք. Երևան

«Վարկս էլ էմ» ՈՒՎԿ ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Դիմող), 21.10.2019թ. դիմելով ՀՀ Սահմանադրական դատարան, խնդրել է որոշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասի՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Դիմողի կարծիքով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասը դրան իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ հակասում է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին և 63-րդ հոդվածի 1-ին մասերին:

Մեջբերելով ՀՀ Սահմանադրական դատարանի 09.10.2012թ. թիվ ՍԴՈ-1051 որոշումը՝ Դիմողը գտնում է, որ օրենսդիրը վիճարկվող օրենքն ընդունելով, ինչպես նաև փոփոխելով «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը, ըստ էության, շրջանցել է ՀՀ Սահմանադրական դատարանի նշված որոշման մեջ տեղ գտած մեկնաբանությունն առ այն, որ եթե իրավաբանական անձն իր կամահայտնությամբ չի հրաժարվել ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները դատական կարգով բողոքարկելու իրավունքից, ապա ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումների սահմանափակ բողոքարկման իրավունքը խախտում է անձի արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները:

Դիմողը գտնում է, որ այն դեպքում, երբ քաղաքացիա-իրավական հարաբերությունների սուբյեկտներն իրենց կամահայտնությամբ, համաձայնագիր կնքելու միջոցով, չեն գալիս համաձայնության առ այն, որ իրենց միջև առաջացող վեճերը կարող են լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի կամ արբիտրաժի միջոցով, ապա այդ դեպքում ֆինանսական կազմակերպություն-հաշտարար հարաբերություններն իրենցից կներկայացնեն հանրային-իրավական հարաբերություններ, քանի որ այն հիմնված չի լինի քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտների հավասարության, կամքի ինքնավարության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության սկզբունքների վրա:

Ըստ Դիմողի՝ օրենսդիրը պարտավոր էր ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1051 որոշումից հետո ոչ միայն փոփոխել «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը՝ այնտեղ ավելացնելով դրույթ առ այն, որ այն անձինք, ովքեր չունեն կնքված համաձայնագիր, կարող են ըստ էության բողոքարկել ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները, այլև առհասարակ չընդունել վիճարկվող օրենքը այն տեսքով, ինչ ընդունվել է:

Դիմողը նշել է, որ արդարադատության մատչելիության մասով՝ Սահմանադրական դատարանը պետք է վիճարկվող նորմի սահմանադրականությունը գնահատի նաև դատական պաշտպանության, վերջինիս տարրը հանդիսացող արդարադատության մատչելիության իրավունքի համատեքստում:

Ելնելով վերոգրյալից՝ Դիմողը խնդրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասի՝ իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերին հակասող և անվավեր:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող 339-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝

«Դատարանը դիմումի քննության ժամանակ պարզում է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերի առկայությունը կամ բացակայությունը»:

Վիճարկվող օրենքի սահմանադրականությունը գնահատելու համար անհրաժեշտ է նախ քննարկման առարկա դարձնել ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումների դատական կարգով բողոքարկման իրավակարգավորումները Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ:

Այսպես, համաձայն ՀՀ քաղ. դատ. օր.-ի 337-րդ հոդվածի 1-ին մասի՝

Ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը կողմերը կարող են վիճարկել դատական կարգով ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելու միջոցով:

Նույնաբովանդակ դրույթ է նախատեսված նաև «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում, համաձայն որի՝

Ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը կողմերը կարող են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով վիճարկել իրավասու դատարան ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելու միջոցով:

Նշված հոդվածների կիրառման, այսինքն՝ հաշտարարի որոշման բողոքարկման հնարավորության որոշման համար, նախևառաջ, անհրաժեշտ է պարզել, թե **արդյո՞ք Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը կողմերի համար դարձել է պարտադիր**, քանի որ նշված հոդվածների իմաստով՝ դատական կարգով բողոքարկման ենթակա է միայն Ֆինանսական համակարգի հաշտարարի՝ **կողմերի համար պարտադիր դարձած որոշումը**:

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝

Հաճախորդն իրավունք ունի դիմելու Ֆինանսական համակարգի հաշտարարին՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք հաճախորդի և Կազմակերպության միջև կնքված պայմանագրով նախատեսված է, թե ոչ: Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու հաճախորդի իրավունքը սահմանափակող համաձայնությունը կամ պայմանն առ ոչինչ է:

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝

1. Պահանջի քննության արդյունքներով Ֆինանսական համակարգի հաշտարարը որոշում է կայացնում պահանջը բավարարելու կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու մասին և նույն օրը այն հանձնում կողմերին կամ փոստով առաքում որոշման մեկական օրինակ:

4. Այն դեպքում, երբ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը առաքելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում հաճախորդն անվերապահորեն և գրավոր ձևով համաձայնվում է որոշման հետ, վերջինս կողմերի համար դառնում է պարտադիր:

Այսպիսով, համաձայն օրենքի կարգավորումների՝ հաճախորդն իրավունք ունի դիմելու Ֆինանսական համակարգի հաշտարարին անկախ հաճախորդի և Կազմակերպության միջև կնքված պայմանագրով այդպիսի իրավունք նախատեսված լինելու հանգամանքից, և հաճախորդի դիմումի հիման վրա հաշտարարի կողմից կայացված որոշումը կողմերի՝ հաճախորդի և կազմակերպության համար պարտադիր է դառնում հաճախորդի կողմից որոշման հետ անվերապահորեն գրավոր ձևով համաձայնվելու դեպքում:

Վիճարկվող դրույթի սահմանադրականության խնդիրն, ըստ էության, վերաբերում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումների դատական բողոքարկման և քննության առարկային և սահմաններին, հաշտարարի որոշումների՝ դատական կարգով բողոքարկման ծավալին:

Հարկ է նկատել, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 338-րդ հոդվածի (**Դիմումին ներկայացվող պահանջները**) 1-ին մասի 5-րդ կետը պահանջում է, որպեսզի Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ

ճանաչելու վերաբերյալ դիմումում պարտադիր նշվեն նաև **որոշումը վիճարկելու հիմքերն ու հիմնավորումները**:

Ընդ որում, վիճարկվող դրույթն էլ (<< քաղ. դատ. օր.-ի 339-րդ հոդվածի 5-րդ մաս) սահմանում է, որ Դատարանը դիմումի քննության ժամանակ պարզում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» << **օրենքով նախատեսված հիմքերի** առկայությունը կամ բացակայությունը:

Նշված իրավակարգավորումների տրամաբանությունը փաստորեն այն է, որ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը կարող է բողոքարկվել միայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» << օրենքով նախատեսված հիմքերով՝ որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումում պարտադիր շարադրելով **օրենքով նախատեսված հիմքերը**, և դատարանն էլ գործի քննությունն իրականացնում է ոչ թե ըստ էության, այլ **միայն օրենքով նախատեսված հիմքերի սահմաններում**:

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» << օրենքի 17-րդ հոդվածը սահմանում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը **չեղյալ ճանաչելու հիմքերը**: Մասնավորապես, համաձայն նշված հոդվածի՝

Իրավասու դատարանը չեղյալ է ճանաչում Ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը, եթե՝

1) պահանջը ենթակա չէ քննության Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից.

2) Ֆինանսական համակարգի հաշտարարը որոշում է կայացրել սույն օրենքով սահմանված ընթացակարգային կանոնների պահանջների խախտմամբ.

3) բացահայտվել են Ֆինանսական համակարգի հաշտարարի անաչառությունը բացառող հանգամանքներ:

Այսպիսով, **Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները դատական կարգով բողոքարկելիս դիմումում պետք է նշվեն վերը թվարկված հիմքերից որևէ մեկը կամ մի քանիսը, և դատարանը դիմումի քննության ժամանակ պարզում է միայն նշված հիմք(եր)ի առկայությունը կամ բացակայությունը**:

Սույն սահմանադրական վեճի շրջանակներում կարևոր է հատկապես քննարկման առարկա դարձնել օրենքով նախատեսված՝ Ֆինանսական համակարգի հաշտարարի և կազմակերպության միջև կնքված **Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագրի իրավաբանական նշանակության հարցը**:

Այսպես, «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» << օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

Կազմակերպությունը կարող է Գրասենյակի հետ կնքված գրավոր համաձայնագրով հրաժարվել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 337-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

Ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը չի կարող վիճարկել այն կազմակերպությունը, որը ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հետ կնքված համաձայնագրով հրաժարվել է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից:

Նշված դրույթներից հետևում է, որ Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հետ վերջինիս որոշումները բողոքարկելու իրավունքից համապատասխան գրավոր համաձայնագրով հրաժարված կազմակերպություններն իրավունք չունեն դատական կարգով բողոքարկել հաշտարարի որոշումները:

Հարկ է նշել, որ ՀՀ Սահմանադրական դատարանն իր 09.10.2012թ. թիվ ՍԴՈ-1051 որոշման մեջ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «...Հաշտարարի որոշումը միայն Հաճախորդի կողմից այն ընդունելու պարագայում դառնում է պարտադիր ոչ միայն իր, այլև մյուս կողմի՝ Կազմակերպության համար, և վերջինս արդեն այդ որոշումը կարող է վիճարկել դատական կարգով՝ բացառապես սույն գործով քննության առարկա հողվածում ամրագրված հիմքերի շրջանակներում, եթե, իհարկե, նա Հաշտարարի գրասենյակի հետ կնքած գրավոր համաձայնագրով չի հրաժարվել Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից...

Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ Կազմակերպությունը Հաշտարարի գրասենյակի հետ կնքված գրավոր համաձայնագրով, այսինքն՝ **իր ազատ կամահայտնությամբ**, հրաժարվում է Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից, օրենքով սահմանված հիմքերով Հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը վիճարկելու սահմանափակ հնարավորություն նախատեսելն իրավաչափ է և սահմանադրականության խնդիր չի հարուցում: Իսկ այն դեպքում, երբ առկա չէ հիշյալ գրավոր համաձայնագիրը, Հաշտարարի որոշումներն իրավասու դատարան վիճարկելու հիմքերի սահմանափակումը՝ այնքանով, որքանով չի նախատեսում այդ որոշումները դատական կարգով ըստ էության վիճարկելու հնարավորություն, իրավաչափ չէ և հանգեցնում է ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով սահմանված իրավունքների իրացման արգելափակմանը»:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր 09.10.2012թ. թիվ ՍԴՈ-1051 որոշմամբ Սահմանադրական դատարանը գտել է, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի, ինչպես նաև այդ հոդվածի հետ համակարգային առումով փոխկապակցված 18-րդ հոդվածի դրույթներով Կազմակերպության՝ դատարան դիմելու իրավունքի սահմանափակումները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը **միայն այն իրավակարգավորման շրջանակներում**, երբ Կազմակերպությունը ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից կամովի հրաժարվելու

վերաբերյալ օրենքով սահմանված կարգով համաձայնագիր է կնքել վերջինիս գրասենյակի հետ:

Գիտավերլուծական կենտրոնն իր նախկինում տված եզրակացություններում անդրադարձել է արդյունավետ դատական պաշտպանության և արդարադատության մատչելիության սահմանադրական իրավունքին, այդ թվում՝ նաև ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-652, ՍԴՈ-665, ՍԴՈ-673, ՍԴՈ-690, ՍԴՈ-719, ՍԴՈ-954 և մի շարք այլ որոշումներին:

Այսպես, ՀՀ գործող Սահմանադրությամբ անձի՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող սահմանադրաիրավական նորմերի բովանդակությունը հետևյալն է.

Հոդված 61. Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

...

Հոդված 63. Արդար դատաքննության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

...

Նշված սահմանադրաիրավական նորմերը համանման բովանդակությամբ սահմանված էին մինչև 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներում, որոնց վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանն իր դիրքորոշումն է արտահայտել 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներում:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Միաժամանակ,

կարևորվել է այդ պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում:

Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար **արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությունը:**

Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակը իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է¹:

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է **պետության պոզիտիվ պարտականությունը՝** ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, **օրենսդրի պարտականությունը՝** լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, **իրավակիրառողի պարտականությունը՝** առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից:²

ՀՀ Սահմանադրության՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող 18-րդ հոդվածը ՀՀ սահմանադրական դատարանի դատական պրակտիկայում, որպես կանոն, վկայակոչվում է 19-րդ հոդվածի հետ սերտ միասնության մեջ՝ որպես իրենից մեկ միասնական իրավական երևույթ ներկայացնող: Դա մասնավորապես վերաբերում է **արդարադատության մատչելիության իրավունքին՝** որպես արդար դատաքննության իրավունքի տարրի, որի սահմանադրական ամրագրումը դիտարկվում է 18-րդ և 19-րդ հոդվածներում՝ միաժամանակ և միասնաբար՝ չկոնկրետացնելով դրա սահմանադրական-տեքստային հիմքը³:

¹ ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. հունվարի 16, ՍԴՈ-673, 8-րդ կետ:

² ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՈ-719, 6-րդ կետ:

³ ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2010, էջեր 222-223:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ **անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել** անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Այսպիսով, 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով ամրագրված (2005թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներ) դատական պաշտպանության իրավունքի և արդար դատաքննության էությունը անձի իրավունքների և ազատության պաշտպանության համար դատարան դիմելու, այդ թվում՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի սահմանումն է և այդ իրավունքի պատշաճ իրականացման համար պետության կողմից գործուն մեխանիզմների և մատչելի պայմանների ստեղծումն ու երաշխավորումը:

ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ՝ «իրեն ուղղված դիմումների հանդեպ դատարանի կողմից անգործություն ցուցաբերելը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դառնում է անձանց համար ոչ մատչելի: Նման իրավիճակն անհամատեղելի է իրավական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հետ:

Դատարանի՝ արդարադատության գործառույթ իրականացնելու միակ հիմքը օրենքով սահմանված կարգով իրեն ուղղված դատական պաշտպանության պահանջ պարունակող դիմումների քննությունն է: Առաջին ատյանի դատարանը որևէ հայեցողություն չունի օրենքին համապատասխանող դիմումին ընթացք տալու կամ չտալու հարցում՝ այն պետք է ընդունվի վարույթ և քննվի անվերապահորեն և առանց որևէ բացառության: Օրենքին չհամապատասխանող դիմումները վարույթ չեն ընդունվում, սակայն, եթե դրանք ժամանակին շտկվում են, ապա կարող են վերստին ներկայացվել: Այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս ատյաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն:

Օրենսդիր մարմնի խնդիրն է ազգային դատավարական իրավունքում ամրագրելու անգործության հաղթահարման արդյունավետ մեխանիզմներ: Հարցը վերաբերում է դատական պաշտպանության արդյունավետ միջոցների երաշխավորմանը՝ հենց անգործության դեմ գործուն իրավական երաշխիքներ ձեռնարկելու եղանակով, ապահովելու և երաշխավորելու մարդու արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը»⁴:

Վերոգրյալ դիրքորոշումների համատեքստում ստացվում է, որ իրավակիրառ պրակտիկայում Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հետ վերջինիս որոշումները բողոքարկելու իրավունքից հրաժարվելու մասին համաձայնագիր չկնքած

⁴ ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՄԴՌ-719, 6-րդ կետ:

կազմակերպությունների՝ հաշտարարի որոշումները դատական կարգով բողոքարկելու իրավունքի սահմանափակումը միայն օրենքով նախատեսված հիմքերով, այլ ոչ թե ըստ էության, խախտում է անձի արդյունավետ դատական պաշտպանության և արդարադատության մատչելիության իրավունքը:

Այսպիսով,

ա) հաճախորդի կողմից Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշմանը համաձայնություն տալու դեպքում այն դառնում է պարտադիր,

բ) հաճախորդի կողմից տրված համաձայնության հիման վրա Ֆինանսական համակարգի հաշտարարի պարտադիր դարձած որոշումը հաճախորդի կողմից կարող է բողոքարկվել միայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով սահմանված հիմքերով (սահմանափակ բողոքարկում),

գ) հաճախորդը կարող է չտալ իր համաձայնությունը հաշտարարի որոշմանը և դատական կարգով պահանջ ներկայացնել կազմակերպության դեմ, որն էլ գործի քննությունն իրականացնում է ըստ էության (ըստ էության բողոքարկում),

դ) հաշտարարի՝ պարտադիր չդարձած որոշումը դատական կարգով բողոքարկման ենթակա չէ, և կազմակերպությունը հաճախորդի հետ վեճը լուծելու համար կարող է դիմել դատարան, որն էլ գործի քննությունն իրականացնում է ըստ էության,

ե) Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հետ գրավոր համաձայնագիր կնքելով՝ կազմակերպությունը կարող է հրաժարվել հաշտարարի որոշումները օրենքով սահմանված հիմքերով և ըստ էության բողոքարկելու իրավունքից,

զ) Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հետ գրավոր համաձայնագիր չկնքած կազմակերպությունը կարող է բողոքարկել հաշտարարի որոշումը դատական կարգով ինչպես ըստ էության, այնպես էլ օրենքով սահմանված հիմքերով:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու տեսանկյունից խնդրահարույց է:

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան